

2026 թվականի առաջին եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինի (CQFIX) եկամտաբերությունը կազմել է 1.2%, Պահպանողականինը (CQCON)՝ -0.2%, Հավասարակշռվածինը (CQBAL)՝ -0.4%:

2026 թվականի մարտի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 8.2-8.3% եկամտաբերություն:

Կենսաթոշակային ակտիվների ընդհանուր արժեքը եռամսյակի ավարտին հասել է 742 միլիարդ դրամի, որից 216 միլիարդ դրամը կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի տեղական ներդրումներից պարտատոմսերը՝ 2.7-3.0% և ավանդները՝ շուրջ 2.7% եռամսյակային եկամտաբերությամբ:

Նույն ժամանակահատվածում արտասահմանյան պարտքային և բաժնային պորտֆելները գրանցել են բացասական եկամտաբերություն՝ արտասահմանյան բաժնային պորտֆելների գրանցած ամենացածր մինչև -4.2% եռամսյակային եկամտաբերությամբ:

Եռամսյակի ընթացքում դրամի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ բացասական 0.5% ազդեցություն է ունեցել ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա:

**ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ  
ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**


**2026Ե1**

## Համաշխարհային և տեղական շուկաներում վերջին զարգացումներ

2026 թվականի առաջին եռամսյակում համաշխարհային ֆինանսական շուկաները գործել են էական անորոշությունների և բարձր անկայունության պայմաններում: Եռամսյակի ընթացքում ամենախոշոր ցնցումը Մերձավոր Արևելքում ծագած ռազմական հակամարտությունն էր, որն էապես փոխեց ներդրողների ռիսկի գնահատումը: Հորմուզի նեղուցի փակումը, ծովային երթուղիների սահմանափակումը և էներգետիկ ենթակառուցվածքների վրա հարձակումները հանգեցրին նավթի գնի կտրուկ աճի: Արդյունքում, ի հայտ եկած գնաճային ռիսկերի և էական անորոշության ֆոնին բաժնային և պարտքային շուկաները հիմնականում եռամսյակն ամփոփեցին բացասական արդյունքներով:

Առաջին եռամսյակի ընթացքում 2026 թվականի համար տնտեսական աճի կանխատեսումը զարգացած և զարգացող երկրների համար աճեցին՝ հասնելով համապատասխանաբար 1.8% և 4.4%-ի: Նման զարգացումների ֆոնին աճեցին նաև 2026 թվականի գնաճի կանխատեսումները թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների համար՝ համապատասխանաբար կազմելով 3.1% և 2.8%:

### 12 ամսյա գնաճը 2026թ մարտին




ԱՄՆ-ում ՀՆԱ-ի իրական աճը 2026 թվականի առաջին եռամսյակում կազմել է 0.5%<sup>1</sup>: Գնաճը տարեսկզբին որոշակի նվազելուց հետո աշխարհաքաղաքական լարվածության ֆոնին մարտին աճել է՝ հասնելով 3.3%-ի: 2026 թվականի մարտի նիստում Դաշնային պահուստային համակարգը քաղաքականության տոկոսադրույքը թողեց անփոփոխ՝ 3.50-3.75% մակարդակում՝ ընթացիկ տարում կանխատեսելով ընդամենը մեկ կրճատման հնարավորություն:

Եվրոգոտում ՀՆԱ-ի աճը 2026 թվականի առաջին եռամսյակում որոշակի նվազել է՝ կազմելով 0.1%, մինչդեռ գնաճը մարտին արագացել է՝ հասնելով 2.6%-ի: Եվրոպական կենտրոնական բանկը (ECB) ևս 2026 մարտին քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ՝ տոկոսադրույքի ապագա փոփոխությունների վերաբերյալ ունենալով զգուշավոր մոտեցում:

<sup>1</sup> Ե/Ե, սեզոնային ճշգրտված չտարեկանացված ցուցանիշ

**Քաղաքականության տոկոսադրույքը  
ընթացիկ եռամսյակի ավարտին**



Չինաստանում ՀՆԱ-ի աճը 2026 թվականի առաջին եռամսյակում արագացել է՝ հասնելով 1.3%, իսկ գնաճը մարտին շարունակել է պահպանվել համեմատաբար ցածր 1.0% մակարդակում: Չինաստանի Ժողովրդական բանկը (PBoC) եռամսյակի ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը Հայաստանում 2026 թվականի մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած աճել է 6.5%-ով: Շինարարության ոլորտը

շարունակել է պահպանել բարձր աճի տեմպը գրանցելով 24% աճ, իսկ ծառայություններն և արդյունաբերությունը գրանցել են համապատասխանաբար 8% և 7% աճ:

Գնաճը 2026 թվականի մարտին կազմել է 4.5%՝ գերազանցելով գնաճի թիրախային մակարդակը: ՀՀ ԿԲ-ն, հավասարակշռելով գնաճային ռիսկերը, քաղաքականության տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում պահել է անփոփոխ՝ 6.50% մակարդակում: Ըստ ՀՀ ԿԲ խորհրդի, առկա անորոշությունների պայմաններում դիտարկվել են ինչպես Ա տիպի սցենարներ՝ կապված համաշխարհային չեզոք տոկոսադրույքների հնարավոր աճի, ներքին ավելցուկային պահանջարկի և հարկաբյուջետային ընդլայնման ռիսկերի հետ, այնպես էլ Բ տիպի սցենարներ՝ պայմանավորված համաշխարհային աճի դանդաղմամբ և ՀՀ ռիսկի հավելավճարի նվազմամբ <sup>2</sup>:

Տնտեսական նման զարգացումներով պայմանավորված՝ համաշխարհային բաժնային արժեթղթերը եռամսյանը հիմնականում ամփոփել են բացասական արդյունքներով:

Եռամսյակի ընթացքում զարգացող շուկաների բաժնետոմսերը գրանցել են զրոյին մոտ բացասական 0.1% եկամտաբերություն՝ գերազանցելով զարգացած շուկաների բաժնետոմսերին, որոնք արձանագրել են 3.5% անկում:

ԱՄՆ բաժնետոմսերի շուկան եռամսյակի ընթացքում գրանցել է չափավոր 4.4% անկում: Տեխնոլոգիական ընկերությունները շարունակել են պահպանել իրենց առաջատար դիրքը, այնուամենայնիվ, աճը աստիճանաբար տեղափոխվել է նաև այլ ոլորտներ:

ԱՄՆ բաժնետոմսերի շուկան եռամսյակի ընթացքում ունեցել է 4.4% անկում՝ գրանցելով 2022 թվականից ի վեր ամենացածր ցուցանիշը: Պայմանավորված արհեստական բանականության ոլորտում նոր մրցակցային մարտահրավերներով և SaaS բիզնես մոդելի

<sup>2</sup> Դրամավարկային քաղաքականության զեկույց (2026թ. 1-ին եռամսյակ)

կայունության վերաբերյալ ներդրողների մտահոգություններով՝ եռամսյակի ընթացքում տեխնոլոգիական ընկերությունների բաժնետոմսերը զգալի անկում են արձանագրել:

Եվրոպական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են 3.5% անկմամբ՝ պայմանավորված էներգետիկ ծախսերի աճով և աշխարհաքաղաքական լարվածությամբ: Եռամսյակի ընթացքում բացառություն չեն կազմել չինական բաժնետոմսերը, որոնք ևս եռամսյակն ամփոփել են բացասական արդյունքներով:

Չնայած մարտ ամսին էներգակիրների գների վերաբերյալ ձևավորված մտահոգություններին՝ Ճապոնիայում բաժնետոմսերի շուկան համեմատաբար ավելի բարձր 3.5% եկամտաբերություն է արձանագրել՝ պայմանավորված փետրվարյան ընտրություններից հետո ձևավորված քաղաքական կայունությամբ, իենի արժեզրկմամբ և կառավարության կողմից աճ խթանող ծրագրերի ակնկալիքներով:


Հաշվետու եռամսյակում համաշխարհային պարտատոմսերի շուկայում ևս բացասական դինամիկա է արձանագրվել՝ պայմանավորված Մերձավոր Արևելքի հակամարտությունից, էներգակիրների գների կտրուկ աճից և մաքսատուրքերի վերաբերյալ անորոշությունից բխող գնաճային ռիսկերով: ԱՄՆ պետական պարտատոմսերը առաջին եռամսյակում համեմատաբար դիմացկուն են գտնվել՝ եռամսյակն ամփոփելով զրոյին մոտ բացասական եկամտաբերություն: Իսկ եվրոպական պետական պարտատոմսերը եռամսյակի համար արձանագրել են 0.6% անկում:

Համաշխարհային ներդրումային դասի պարտատոմսերը (investment grade) եռամսյակն ամփոփել են -1.1% եկամտաբերությամբ, մինչդեռ ոչ ներդրումային դասի պարտատոմսերը (high yield) գրանցել են -1.3% անկում:

Եռամսյակի ընթացքում հումքային ապրանքները գրանցել են 24.4% եկամտաբերություն՝ պայմանավորված հիմնականում էներգակիրների գների կտրուկ աճով: Էներգակիրները եռամսյակի ամենաբարձր եկամտաբերությունն արձանագրած ակտիվների դասն են եղել՝ 60.0% եկամտաբերությամբ՝ պայմանավորված Մերձավոր Արևելքի հակամարտությունից բխող նավթի և գազի մատակարարման ու ծովային երթուղիների խափանումներով: Այս պայմաններում էներգակիրներից Brent տեսակի նավթի գնի փոփոխությունը եռամսյակի ընթացքում էական մեծ է եղել՝ կազմելով 103.3%: Եռամսյակի ընթացքում թանկարժեք մետաղների եկամտաբերություն ևս եղել է դրական՝ կազմելով 7.6%: Թանկարժեք մետաղները, արդյունաբերական մետաղները և գյուղատնտեսական ապրանքները նույնպես եռամսյակը ամփոփել են դրական, սակայն, զգալիորեն ավելի չափավոր արդյունքներով՝ համապատասխանաբար 7.6%, 3.6%, և 8.0% եկամտաբերությամբ:

## Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական շուկայական ինդեքսների եկամտաբերությունների 2026 թվականի դինամիկան<sup>3</sup>

● Առավելագույն ● Նվազագույն ● Ներկա




<sup>3</sup> AMGOV\_5-10, AMGOV\_10-20, AMGOV\_201-ի համար աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ: Մնացած արտասահմանյան ակտիվների աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

## 2026 թվականի առաջին եռամսյակի եկամտաբերության մեկնաբանություն


2026 թվականի առաջին եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերի տեղական ներդրումները հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով, ինչը հնարավորություն է ընձեռել մասնակիորեն մեղմելու արտասահմանյան ներդրումների բացասական արդյունքները: Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի կորպորատիվ պարտատոմսերը, մինչդեռ արտասահմանյան բաժնային արժեթղթերն ունեցել են ամենամեծ բացասական ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա: Դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ ևս եռամսյակի ընթացքում բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:

Նման զարգացումներով պայմանավորված՝ 2026 թվականի առաջին եռամսյակը Կայուն եկամտային ֆոնդը ամփոփել է դրական արդյունքով, մինչդեռ Պահպանողական և Հավասարակշռված ֆոնդերը, բաժնային արժեթղթերում ունեցած ներդրումների ազդեցությամբ, եռամսյակն ամփոփել են զրոյին մոտ բացասական արդյունքով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը (CQFIX) ունեցել է 1.2%, Պահպանողականը (CQCON)՝ -0.2%, Հավասարակշռվածը (CQBAL)՝ -0.4% եկամտաբերություն:


**CQFIX եռամսյակային եկամտաբերություն**



**CQCON եռամսյակային եկամտաբերություն**




**CQBAL եռամսյակային եկամտաբերություն**




2026 թվականի մարտի վերջի դրությամբ ֆոնդերի ակտիվների 66-80%-ը ներդրված է եղել Հայաստանում, այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերը, ավանդները, բաժնային արժեթղթերը և այլընտրանքային ներդրումները: Ակտիվների մնացած 20-34%-ը ներդրված է եղել արտասահմանյան բաժնային և պարտքային արժեթղթերում:


**CQFIX** ակտիվների  
կառուցվածքը



**CQCON** ակտիվների  
կառուցվածքը




**CQBAL** ակտիվների  
կառուցվածքը



- Ավանդներ և դրամական միջոցներ
- Տեղական կորպորատիվ պարտատոմսեր
- Արտասահմանյան բաժնային արժեթղթեր
- Այլընտրանքային ներդրումներ
- ՌՅ պետական պարտատոմսեր
- Արտասահմանյան պարտաքային արժեթղթեր
- Տեղական բաժնային արժեթղթեր


Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը և արտասահմանյան բաժնային ներդրումային ֆոնդերը: Իրենց մեծությամբ հաջորդը եղել են բանկային ավանդները, դրամային կորպորատիվ պարտատոմսերն ու արտասահմանյան պարտաքային ներդրումային ֆոնդերը: Ներդրումների ավելի փոքր մասն են կազմել տեղական այլընտրանքային ներդրումները և տեղական բաժնետոմսերը:

**Բաժնային ակտիվների  
եկամտաբերությունը ընթացիկ  
եռամսյակում**



4.2% անկում եռամսյակի ընթացքում:

**Պարտքային ակտիվների  
եկամտաբերությունը ընթացիկ  
եռամսյակում**



<sup>4</sup>2026 թվականի առաջին եռամսյակում գլոբալ և զարգացած երկրների բաժնետոմսերն ունեցել են համապատասխանաբար 3.1% և 3.5% անկում:

ԱՄՆ բաժնետոմսերը նույն ժամանակահատվածում գրանցել են շուրջ 4.4% եռամսյակային անկում:


Այս եռամսյակում Պահպանողական և Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան բաժնային պորտֆելները, անմասն չմնալով համաշխարհային շուկաներում վերջին զարգացումներից, գրանցել են 4.0% և

<sup>5</sup>Գլոբալ ներդրումային դասի պարտատոմսերը առաջին եռամսյակում գրանցել են բացասական 1.1% եկամտաբերություն: Կենսաթաշակային ֆոնդերից Կայուն եկամտային և Պահպանողական ֆոնդերի արտասահմանյան պարտքային պորտֆելների եկամտաբերությունը ևս եռամսյակի ընթացքում եղել է բացասական՝ տատանվելով 1.2% -ից 1.9%-ի միջակայքում:

Եռամսյակի ընթացքում դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի որոշակի արժևորմամբ պայմանավորված ընդհանուր արտարժույթային ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա եղել է բացասական 0.5%-ի չափով:

4 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):  
5 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

**ՀՀ պետական պարտատոմսերի  
եկամտաբերությունը ընթացիկ  
եռամսյակում**



<sup>6</sup>Հայաստանի 5-10 տարի (AMGOV 5-10) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 2.9%, 10-20 տարի (AMGOV 10-20) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 2.4%, իսկ 20 տարուց ավել (AMGOV 20I) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 1.3%:

2026 թվականի առաջին եռամսյակում ֆոնդերի՝ Հայաստանի պետական պարտատոմսերի պորտֆելները ունեցել են 2.4%-2.5% եկամտաբերություն:

Ֆոնդերի ավանդային պորտֆելները ընթացիկ եռամսյակում գրանցել են 2.7% եռամսյակային եկամտաբերություն:

Ֆոնդերի՝ Հայաստանի ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է 3.2% - 3.7% միջակայքում:


Ֆոնդերի Հայաստանի ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը ֆոնդից կախված տատանվել է 4.0% - 4.7% միջակայքում:

Ֆոնդերի տեղական բաժնետոմսերի եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում ֆոնդից կախված էական տարբերվել է. Պահպանողական ֆոնդի տեղական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են 19.4% անկմամբ, մինչդեռ Հավասարակշռված ֆոնդի տեղական բաժնետոմսերը՝ 2.2% աճով:

<sup>6</sup> Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

## Ֆոնդերի երկարաժամկետ եկամտաբերությունը


### Ֆոնդերի փայի հաշվարկային արժեքը



2026 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինը ստեղծման պահից ունեցել է 8.2%, Պահպանողականը՝ 8.2%, իսկ Հավասարակշռվածը՝ 8.3% միջին տարեկան եկամտաբերություն:

Վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը Կայուն եկամտային ֆոնդի համար կազմել է 5.5%, Պահպանողականի համար՝ 6.3%, իսկ Հավասարակշռվածի համար՝ 6.5%:

### Ստեղծման պահից եկամտաբերություն




Կենսաթոշակային կուտակումների գնողունակությունը ստեղծման պահից ավելացել է 119% - 124%-ով՝ ֆոնդերի՝ գնաճից բարձր եկամտաբերության շնորհիվ:<sup>7</sup>

2026 թվականի մարտին կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 158%-163% եկամտաբերություն: Նույն ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է շուրջ 39%:

<sup>7</sup> Գնաճով ճշգրտված եկամտաբերությունը հաշվարկվել է որպես կուտակային անվանական եկամտաբերության և կուտակային գնաճի տարբերություն: Որպես գնաճի ցուցանիշ հիմք է ընդունվել Հայաստանի Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը

**Կենսաթաշակային ակտիվների  
մեծությունը**



2026 թվականի մարտին Յե-Կվադրատ Ամպեգայի կողմից կառավարվող կենսաթաշակային ֆոնդերի շուրջ 454 հազար մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 742 միլիարդ դրամ, որից շուրջ 527 միլիարդ դրամը կազմել են հատկացումները, իսկ 216 միլիարդ դրամը՝ կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

## Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական ակտիվների դասերի<sup>8</sup> Եկամտաբերություն

2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026M3
Government Bonds 20+ 35.5%	DM Equities 22.7%	Government Bonds 20+ 25.5%	DM Equities 26.9%	DM Equities 27%	DM Equities 12.6%	Term deposits AMD 10%	DM Equities 24.4%	Government Bonds 20+ 19.3%	DM Equities 21.6%	Government Bonds 5-10 2.9%
Government Bonds 5-10 32.5%	Government Bonds 5-10 21.7%	Term deposits AMD 12.5%	Government Bonds 20+ 17.4%	Government Bonds 20+ 19.3%	Term deposits AMD 9.9%	Government Bonds 0-5 6.2%	Government Bonds 20+ 23%	DM Equities 19.2%	Government Bonds 20+ 20.3%	Government Bonds 0-5 2.6%
Government Bonds 0-5 22.5%	Government Bonds 20+ 20.9%	Government Bonds 5-10 10.3%	Government Bonds 5-10 16.5%	Term deposits USD 14.1%	Government Bonds 0-5 4.4%	Government Bonds 5-10 2.4%	Government Bonds 5-10 17.1%	Government Bonds 5-10 15.2%	Government Bonds 5-10 17.0%	Term deposits AMD 2.3%
CQFIX 15.9%	Government Bonds 0-5 15.2%	CQFIX 8.3%	CQBAL 14.3%	CQBAL 12.7%	Government Bonds 5-10 3.2%	Government Bonds 20+ -4.1%	CQBAL 16.5%	Government Bonds 0-5 12.9%	CQBAL 13.8%	Government Bonds 20+ 1.3%
Term deposits AMD 15.3%	Term deposits AMD 14.6%	Government Bonds 0-5 7.7%	CQCON 13.8%	CQCON 11.8%	CQBAL 3.1%	CQFIX -4.5%	CQCON 16.3%	CQBAL 11.7%	Government Bonds 0-5 13.3%	CQFIX 1.2%
CQCON 12.5%	CQBAL 14.2%	Term deposits USD 5.7%	CQFIX 10.7%	CQFIX 10.6%	CQCON 2.5%	CQCON -8.2%	Government Bonds 0-5 13.9%	CQCON 11.3%	CQCON 12.8%	Term deposits USD 1.0%
CQBAL 12.2%	CQCON 14%	CQCON 4.9%	Term deposits AMD 10.6%	Term deposits AMD 10.1%	Government Bonds 20+ 0.7%	CQBAL -8.9%	CQFIX 12.6%	Term deposits AMD 9.2%	CQFIX 10.8%	CQCON -0.2%
DM Equities 8.4%	CQFIX 11.9%	CQBAL 4.2%	Government Bonds 0-5 9.5%	Global IG Bonds 9.2%	CQFIX 0.4%	Term deposits USD -14.5%	Term deposits AMD 10.7%	CQFIX 9.0%	Term deposits AMD 9.6%	CQBAL -0.4%
Term deposits USD 7.5%	Global IG Bonds 7.4%	Global IG Bonds -1.2%	Global IG Bonds 6.8%	Government Bonds 0-5 5%	Term deposits USD -4%	Global IG Bonds -16.2%	Global IG Bonds 5.7%	Term deposits USD 3.7%	Global IG Bonds 8.2%	Global IG Bonds -1.1%
Global IG Bonds 2.1%	Term deposits USD 6.9%	DM Equities -7.9%	Term deposits USD 4.1%	Government Bonds 5-10 3.8%	Global IG Bonds -4.7%	DM Equities -32.4%	Term deposits USD 5.1%	Global IG Bonds -1.7%	Term deposits USD 4.0%	DM Equities -3.5%

<sup>8</sup> Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ և Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination): Աղյուսակում ներկայացված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝ Government Bonds – Պետական պարտատոմսեր, Term deposits – Ժամկետային ավանդներ, Global IG Bonds – Գլոբալ պարտատոմսեր, DM Equities – Զարգացած երկրների բաժնետոմսեր:



**Շուշաննա Աղաբեյյան, CFA**

Ներդրումային Վերլուծաբան  
Ցե-Կվադրատ Ամպեգա



**Իգնատ Ֆրանգյան, CFA**

Ռիսկերի Կառավարիչ  
Ցե-Կվադրատ Ամպեգա

## Ծանուցում

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ներդրում պարունակում է ռիսկեր, ֆոնդերի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն կարող կանխորոշել ֆոնդերի հետագա եկամտաբերությունը:

Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը և ենթադրում են բոլոր եկամուտների վերաներդրում:

Այս փաստաթուղթը ծառայում է բացառապես տեղեկատվական նպատակի և չի ներկայացնում որևէ հրապարակային առաջարկ ֆոնդի փայեր գնելու կամ վաճառելու: Սույն փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը պետք չէ դիտարկել որպես ներդրումային խորհրդատվություն:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: